

Մերուժան Կարապետեան

Դեռևս ժԹ դարի վերջերին Հայր Ղե-
ռնդ Ալիշանի կատարած ուսումնասիրու-
թիւնները¹ շնորհիւ գիտական շրջանառու-
թեան մէջ դրուեց ժԳ-ժԶ դարերում վե-
նետկահայութեան պատմութեան վերաբե-
րեալ հսկայածաւալ դիւանական փաս-
տաթղթերի մի կորպուս: Վերջին տասնա-
մեակներին բազում աշխատութիւններ,
ստեղծուած ինչպէս հայ հետազոտողների,
այնպէս էլ ժամանակակից իտալացի շնոր-
հալի հայագէտների կողմից, եկան ամբող-
ջացնելու ու միաժամանակ բացայայտելու
վենետկահայոց աւելի ուշ շրջանի պատ-
մութեան, տնտեսական ու մշակութային
գործունէութեան նոր էջեր²:

Մեր ձեռքի տակ է մի փաստաթուղթ,
որի վկայութիւնները ժամանակին գիտա-
կան շրջանառութեան մէջ են դրուել Միխ-
իթարեան միաբան եւ նշանաւոր հայագէտ
Հ. Ղեռնդ Ալիշանի կողմից «Ազգահամար
Հայոց Վենետիկ» անունով³: Դա 1750
թուականի օգոստոսի մեկի դրութեամբ Վե-
նետիկում մշակական բնակութիւն հաստա-
տած հայոց վերաբերեալ «Nota di quanti
Armeni, e Figli d'Armeni Adulti che si
ritrouano in Inclita Città di Venezia, tanto
Secolari, quanto Religiosi in questa di Primo
Agosto 1750» անունով սպազիր փաս-
տաթուղթն է⁴:

Փաստաթղթում թուարկուած են վե-
նետկահայերի արական սեռի անդամները՝
70 հոգի, միաժամանակ թուարկուած է
նաեւ քաղաքում (Սուրբ Նաչ եկեղեցում)
հոգեւոր գործունէութիւն ծաւալող եկեղե-
ցական դասը: Ստորեւ հրատարակելով

- degli Studi Ca'Foscari di Venezia, 1996, pp. 287-297):
- Հ. Ղ. Ալիշան, Սիւսկան. Տեղագրութիւն Սիւ-
նեաց աշխարհի, Վենետիկ-Ս. Ղազար, 1893, էջ
301
- Վենետիկի Archivio di Stato Veneto-ում պահու-
ող այս փաստաթղթի մի այլ օրինակին (տե՛ս Ս.
Ղազար, Հ. Ղ. Ալիշանի անձնական դիւան,
«Դիւան հայոց պատմութեան», հատոր Ե (1603-
1830) փաստաթղթերի անոխայ ժողովածոյ) հե-
տագայում հպանցիկ անդրադարձել են նաեւ
վենետկահայոց պատմութեան անդրադար-
ձած այլ հեղինակներ (տե՛ս օրինակ Aleramo
Hermet, Paola Cogni Ratti di Desio, La Venezia
degli Armeni. Sedici secoli, tra storia e leggenda,
2a edizione ampliata e aggiornata, p. 107; նաեւ հա-
լերէն թարգմանութիւնը՝ Ալերամո Հերմետ, Պաու-
լա Կոցնի Ռատտի դի Դեզիո, Հայերի Վե-
նետիկը. Տասնվեց դար պատմութեան եւ սոսա-
պելի միջոց, իտ. թարգմ. Ս. Յարութեանցի, Երեւան,
«Մուրսիա»-«Ս. Պարթեւ» հրատ., 2000; Gli Ar-
meni e Venezia. Dagli Sceriman a Mechitar: il mo-
mento culminante di una consuetudine millenaria.
A cura di Boghos Levon Zekian e Aldo Ferrari.
Venezia, 2004 (Istituto Veneto di Scienza, Lettere
ed Arti). Հայ-իտալական յարաբերութիւնների
պատմութեան վերաբերեալ կարեւոր են Աննա
Օրիսինեանի կողմից կազմուած մատենագիտա-
կան ցանկերը (տե՛ս Anna Sirinian, Diciotto anni
di studi italiani sulle relazioni italo-armene (Bibli-
ografia storica italiana degli anni 1978-1995).-
"Ad limina Italiae. Առ դրունս Իտալիոյ. In viag-
gio per l'Italia con mercanti e monaci armeni". A
cura di Boghos Levon Zekian, Venezia: Università

1 Տե՛ս L'Armeno-Veneto. Compendio storico e docu-
menti delle relazioni degli Armeni coi Venezioani.
Primo periodo. Secoli XIII-XIV, Venezia-San-
Lazzaro, 1893; Հ. Ղ. Ալիշան, Հայ-վենետկ
յարրնչութիւնը Հայոց եւ վենետկ ի ժԳ-ժԶ եւ
ժԵ-ժԶ դարս, Վենետիկ-Ս. Ղազար, 1896:

2 Տե՛ս, օրինակ, Aleramo Hermet, Paola Cogni
Ratti di Desio, La Venezia degli Armeni. Sedici
secoli, tra storia e leggenda, 2a edizione ampliata e
aggiornata, Milano: "Mursia", 1993; նաեւ հալեր-
րէն թարգմանութիւնը՝ Ալերամո Հերմետ, Պաու-
լա Կոցնի Ռատտի դի Դեզիո, Հայերի Վենետի-
կը. Տասնվեց դար պատմութեան եւ սոսապելի
միջոց, իտ. թարգմ. Ս. Յարութեանցի, Երեւան,
«Մուրսիա»-«Ս. Պարթեւ» հրատ., 2000; Gli Ar-
meni e Venezia. Dagli Sceriman a Mechitar: il mo-
mento culminante di una consuetudine millenaria.
A cura di Boghos Levon Zekian e Aldo Ferrari.
Venezia, 2004 (Istituto Veneto di Scienza, Lettere
ed Arti). Հայ-իտալական յարաբերութիւնների
պատմութեան վերաբերեալ կարեւոր են Աննա
Օրիսինեանի կողմից կազմուած մատենագիտա-
կան ցանկերը (տե՛ս Anna Sirinian, Diciotto anni
di studi italiani sulle relazioni italo-armene (Bibli-
ografia storica italiana degli anni 1978-1995).-
"Ad limina Italiae. Առ դրունս Իտալիոյ. In viag-
gio per l'Italia con mercanti e monaci armeni". A
cura di Boghos Levon Zekian, Venezia: Università

փաստաթղթի լուսանկարը⁵ եւ տեքստը՝
փորձենք այն առաջին անգամ ենթարկել
մանրամասն քննութեան:

- 9. Sig. Co. Pietro Seriman
- 10. Sig. Co. Lorenzo Seriman
- 11. Sig. Co. Roberto Seriman



Nota di quanti Armeni, e Figli d'Armeni
Adulti che si ritrouano in Inclita Città di
Venezia, tanto Secolari, quanto Religiosi in
questa di Primo Agosto 1750

- 1. Sig. Co. Emanuel Seriman
- 2. Sig. Co. Alessandro Seriman
- 3. Sig. Co. Michiel Seriman
- 4. Sig. Co. Gio. Stefano Seriman
- 5. Sig. Co. Tadeo Seriman
- 6. Sig. Co. Bartolameo Seriman
- 7. Sig. Co. Nazario Seriman
- 8. Sig. Co. Zaccaria Seriman

- 12. Sig. Co. Basilio Seriman
- 13. Sig. Cioachim di Marco
- 14. Sig. Giouanni Scieepuos
- 15. Sig. Pietro Martini
- 16. Sig. Gregorio Mirman
- 17. Sig. Stefano Sauum
- 18. Sig. Apostolo d'Apel
- 19. Sig. Elia d'Alessandro
- 20. Sig. Serafin di Murat
- 21. Sig. Gabrielo di Timoteo
- 22. Sig. Giouanni di Marco
- 23. Sig. Zaccaria Casanoua
- 24. Sig. Baldissera d'Antonina
- 25. Sig. Naapet Sauum

5 Այն, ստանց գիտական քննութեան, հրատարա-
կել ենք Roma-Armenia (Roma, 1998) ժողովածո-
յում:

26. Sig. Naapet di Marco
27. Sig. Antonio d'Alessandri
28. Sig. Angelo d'Alessandri
29. Sig. Toros di Manuch
30. Sig. Battista Manuch
31. Sig. Giouanni Manuch
32. Sig. Culuz dà Caffa
34. Sig. Diodato di Michele
35. Sig. Apostolo di Emanuel
36. Sig. Saluador di Menazacan
37. Sig. Saluador di Arutum
38. Sig. Giorgio di Arutum
39. Sig. Zaccaria d'Auri
40. Sig. Paolo Rosati
41. Sig. Pietro Rossi
42. Sig. Paolo di Martin
43. Sig. Gio. Battista di Leone
44. Sig. Giuseppe di Leone
45. Sig. Zoropapel di Carapet
46. Sig. Gregorio di Agdolo
47. Sig. Lazaro Agan
48. Sig. Antonio Agan
49. Sig. Marco Agan
50. Sig. Fio. Battista Sciecpuos
51. Sig. Saluador di Caracas
52. Sig. Gregorio di Giouanni
53. Sig. Caciatur di Aricuan
54. Sig. Filippo Azat
55. Sig. Giacomo di Togat
56. Sig. Giouanni Brigian
57. Sig. Cristofolo di Giacomo
58. Sig. Giorgio Rizzi
59. Sig. Pietro Rizzi
60. Sig. Baldissera di Malachia
61. Sig. Vartan di Ouuanes
62. Sig. Pietro Casanoua

63. Sig. Girach Mirman
64. Sig. Nunciato Casanoua
65. Sig. Cristofolo d'Arutum
66. Sig. Apostolo di Nicola
67. Sig. Giouanni Benclè
67. Sig. Antonio Benclè
69. Sig. Gio: Battista Benclè
70. Sig. Tadeo di Tomas

Nota de Religiosi

- Monsignor Atanasio d'Abram
 Monsignor Minas di Peruas
 Monsignor Sarchis di Constantinopoli
 Co: Abb. Zaccaria Seriman
 Don Melcisedech.
 Don Pietro di Vartanes
 Don Diodato d'Alessandro
 Don Nunciato
 Don Gregorio di Marco
 Don Michele
 Don Giouanni d'Auri
 Don Antonio di Murat
 Dott. Don Domenico Manuch
 Don Giouanni di Pietro
 Don Carapiet
 Don Daud
 Don Pietro d'Angora

Qui appresso si nota li Nomi di quelli che interuenero nel Capitolo Generale nella Chiesa di S. Croce delli Armeni adi 13. Ottobre 1748, e che nuouamente riballottoro la Costituzione Nazionale 1689. confermarono, e per meglio direzione fecero l'aggiunta come si vede più distinto nel Capitolare, e fù approuato con nu. 29. Voti.

1. Gregorio Girach Mirman
2. Apostolo d'Apel

3. Naapiet e Paolo Saum
4. Steffano Saum
5. Naapiet di Marco
6. Serafin di Murat
7. Filippo d'Arat
8. Giorgio Rizzi
9. Gio. Battista di Leone
10. Cristofolo d'Arutum
11. Giorgio di Arutum
12. Arutum di Simeone
13. Giuseppe di Morsè
14. Giuseppe di Sarchis
15. Zora Pasgal
16. Cristofolo d'Arutum
17. Pietro di Murat
18. Filippo Saum
19. Gio: Battista Seriman
20. Tadeo Seriman
21. Cristoforo di Gregorio
22. Cristoforo di Giacomo
23. Giouanni di Marco
24. Arapiet di Manghi
25. Elia d'Alessandro
26. Antonio d'Elia
27. Nunciato Casanoua
28. Zaccaria Casanoua
29. Baldissera d'Antinuio
30. Giouanni Benclè
31. Gio: Bassa Benclè
32. Antonio Benclè
33. Tadeo di Toma

Qui appresso si vede quelli, che interuenero nel Capitolo Generale nella Chiesa di S. Croce delli Armeni adi 24. Maggio 1750., e fecero li 12. Deputati acciò sijno Conse-ruatori, e Garanti all'Instruzione Nazionale 1689., e diffinissero la Causa contro l'Eccell.

Procuratia di Città, & Assuntori di Giudizio endente nel Cons. Eccel. di 40. C.N.

1. Giouanni Sciecpuos
2. Pietro Martini
3. Apostolo d'Apel
4. Naapiet di Marco
5. Serafin di Murat
6. Cristofolo d'Arutum
7. Giorgio di Arutum
8. Cristoforo di Gregorio
9. Zora Papel
10. Gio: Battista Melchior
11. Steffano di Luca
12. Diodato di Michele
13. Giouanni di Murat
14. Manuch d'Oscan
15. Steffano di Toros
16. Zaccaria d'Elia
17. Paolo Giuseppe
18. Michele di Ciacomio
19. Gregorio di Giouanni
20. Giuseppe di Giorgio
21. Diodato di Andrea
22. Cristofolo di Giacomo
23. Giouanni di Marco
24. Arabiet di Manghi
25. Gabrielo d'Agalar
26. Marco di Daud
27. Nunciato Casanoua
28. Zaccaria Casanoua
29. Baldissera d'Antonio
30. Giouanni Benclè
31. Apostolo di Nicola
32. Baldissera di Malachia
33. Pietro Casanoua
34. Cristofolo di Gregorio
35. Giacomo di Anania

- 36. Martin di Toma
- 37. Saluador di Nazaret
- 38. Minas di Diodato
- 39. Giouanni di Beggian
- 40. Giouanni d'Arutum
- 41. Giorgio Rizzi
- 42. Pietro d'Antonio
- 43. Saluador Badaglioglihi
- 44. Giuseppe di Leone
- 45. Nuri di Marco
- 46. Saluador di Diodato

Յուզակի ուսումնասիրութիւնը յստակ ցոյց է տալիս Վենետիկի հայ համայնքի ձեւաւորման ակունքները: Համայնքի սոցիալական կազմը պարզունակ է. այն բաղկացած է հիմնականում հայ առեւտրական դասի խոշոր ներկայացուցիչներից եւ հոգեւորականներից: Առաւել ընդարձակ է համայնքի ձեւաւորման աշխարհագրութիւնը՝ Նոր Զուղա (Շեհրիմաններ, Միրիման Գերաքներ, Հերմէթեաններ եւ այլն), Կ. Պոլիս եւ Ակն (Scieepuos-Սեղրոսեաններ, Casanoua-Նորտունգներ, Ալեքսանեաններ, Գարագաշներ, Աղտոլեաններ, Վելիջանեաններ եւ այլն), Իզմիր, Անգորա, Հալէպ, Ուսհա եւ այլն: Պակաս նշանակալի չեն Արեւելեան Հայաստանը ներկայացնող սիւնեաց (Մեղրի, Ղափան) ընտանիքները (Շահումեաններ, Աբելեաններ, Երիջաններ եւ այլն): Ստորեւ կը փորձենք քննութեան ենթարկել ցուցակում ներկայացուած ընտանիքների պատմութիւնը այնքան, ինչքան թոյլ են տալիս հետեւելու Վենետիկի պետական արխիւներում պահուող վաճառականական, նստարական ակտերը, հայկական կտակները, այլ փաստաթղթեր, ինչպէս նաեւ քաղաքում (Ս. Խաչ հայկական եկեղեցում եւ այլուր) եւ շրջակայքում պահպանուած վիմագիր ժառանգութիւնը:

1. SAUM – Շահումեաններ. Յուզակի 17-րդ եւ 25-րդ տեղերում գտնուող Ստեփան, Նահապետ եւ Ս. Խաչի հոգաբարձուների Պողոս (Paolo) եւ Փիլիպոս (Filippo) Շահումեանները ակնյայտօրէն զբաղեցնում են կարեւորագոյն տեղ վենետիկացի, եթէ հաշուի առնենք, որ առաջին տասներկու հորիզոնականները ներկայացնում են Եւրոպայի ամենահարուստ ընտանիքներից մէկը՝ Շեհրիմանեանները:

Ծագումով մեղրեցի այս ընտանիքի առանձին անդամների առեւտրատնտեսական գործունէութեանը Վենետիկում առաջինը ուշադրութիւն դարձրեց Հ. Ղեւոնդ Ալիշանը, որին յաջողուեց վենետիկեան դիւանային փաստաթղթերի հիման վրայ նոյնիսկ ուրուագծել ընտանիքի տոհմածառը ժէ դարի կէսերից մինչեւ ժԸ դարի կէսն ընկած ժամանակահատուածի համար⁶: Վենետիկի պետական դիւանատանը պահպանուած մի քանի տասնեակ վաճառականական ու նստարական ակտերը, նամակները վկայում են, որ դամասկոսեան կերպասեղէնի, հայելիների ու ապակեայ ճրագարանների առեւտրով զբաղուած Շահումեան ընտանիքի վաճառատան գործունէութիւնը Վենետիկում եւ Լիւռնոյում իր բարձրութեանը հասաւ ժԸ դարի առաջին քառորդում Պողոսի որդի Նահապետ եւ Դաւթի որդի Զաքարիա Շահումեանների գործունէութեան շնորհիւ: Շահումեանները իրենց վաճառականակից Նուրեան (Nuri) ընտանիքի հետ ձեռք բերեցին նաեւ որոշ նաւեր կամ նրանց տարողութեան մի մասը Իզմիր-Վենետիկ առեւտրական գծում աշխատելու համար:

6 Հ. Ղ. Ալիշան, Սիսական, էջ 301

1743. 29. Agosto. In Pregadi.

QUANTO rappresentano nel loro Memoriale le due Famiglie Armene SAUM, E NURI tutto con esatezza raccoglie nella ora letta diligente Scrittura il Magistrato de V. Sauij alla Mercanzia si rimarcano li danni che si professano sofferti da esse in Smirne per esser stato obligato da quel Consolle Veneto il Cap: Voltolina della loro Nave Atta S. Croce, e Nostra Signora delle Grazie a preferir nel Carico alli proprijgli Effetti altrui per esser questi di Sudditi Veneti d'origine. Come però si rileva esserfi espresso il Consolle nel rilasciar la Commessione, che era questa esecutiva degli ordini del Bailo nostro alla Porta, così farà del Zelo del Magistrato l'assicurarfi della precisa verità del fatto.

Intendendosi int.^o da quanto tempo fianfi trapiantate le due Famiglie in questa Città; Che in essa vi tengano Cafe aperte di Negozio, con Determinazione anche di non più allontanarvisi; che il loro Negozio sia così florido, e così vantaggioso alle Arri di questa Città, che nelli soli tre ultimi decorfi anni sia affceso à Ducati trecento mille. Che abbian pur Casa aperta di Negozio alle Smirne, riguardata come Veneta^a anche da quel Consolle Nostro, che per lo passato abbian av vti, ed abbian anche

che in prefente più Legni coperti dal Veneto Paviglione, e qualificati perciò per Sudditi, che anche in all'ora, che fù stabilito l' Armo delle Naui Atte, ne abbian convertita una delle loro in Atta, che è appunto quella, nel di cui Carico pretendon aver sofferto danno per lo esposto motiuo; Penetrata da tutto ciò la Equità di questo Consoglio non meno, che dalli maturi, prudenti riflessi del Magistrato, seconando il di lui sentimento statuisse; Che le Naui di proprietà, e di raccomandazione, non men che gli Effetti delle dette due Famiglie SAUM, E NURI abbian ad esser trattate, come qualunque altro Suddito Originario; e così anche le altre Famiglie tutte, che si trovassero in simili circostanze. Animate di tal modo esse due Famiglie potranno con animo sicuro dare il Carico alla loro Nave Atta degli Effetti di questa Piazza, al che farà merito del Magistrato l'aggiunger loro Eccitamento; ben certe così di essere trattate come qualunque Suddito Nostro Originario.

Bortolamio Borghesaleo Nod. Ducal.

Նոտարական ակտը Ծափուսեանների եւ Նուրիների կողմից նաւերի ձեռքբերման մասին

Ճիշտ այդ ժամանակ վերջիններիս միացաւ նաեւ Սիւնիքի պատամբութիւնից յետոյ Եւրոպա անցած Ստեփաննոս Շահումեանը: Վերջինիս Վենետիկ հասնելու մասին կարճ մի տեղեկութիւն է տալիս 33 երկիր ճանապարհորդած հայ ուղեգիր, Միխիթար Սեբաստացու աշակերտ Յովհաննէս Թովմաճանեանը, որն իր առայժմ անտիպ ուղեգրութեան մէջ (թերթ 16-17) 1733 թուականի սեպտեմբերի 19-ին հաղորդում է. «Ի նմին ժամանակի եկեալ էր յարեւելից պարոն Ստեփանն Շահումեանց եւ էր ի տան պարոն Զաքարին եւ կամէր զնալ ի Վենետիկ: Ընդ սմա յուղի անկաւ յետ եօթն աւուրց եւ Յարութիւնն եւ հասին խաղաղութեամբ ի Վենետիկ: Եւ զի այս պարոն Ստեփան էր անձն բարի յոյժ եւ սիրէր մեծապէս զՅարութիւնն, տարաւ զնա ընդ իւր ի տուն իւրեանց, ի Սանթա

Մարիա Ֆորմոզայ⁷ առ պարոն Նահապետն Շահումեանց եւ ոչ թողացուցեալ զնա զնալ նոյն օրին ի վանս, ցուցին առ նա սէր եւ զգուանս, զի եւ ծանօթ իսկ էր պարոն Նահապետն հօր Յարութիւնին»:

7 Սանթա Մարիա Ֆորմոզա (Santa Maria Formosa) կամ, ինչպէս Ղ. Ալիշանն է կոչում, Սուրբ Մարիամ Խորոտիկ եկեղեցու թաղում, որ Վենետիկի յայտնի եկեղեցիներից մէկն է, հայ բնակչութիւնը հիմնուած էր շատ վաղ ժամանակներից, գլխաւորապէս՝ Արկայիս Ռուկա Միոսֆա (Ruga Giuffa) փողոցում, որն էլ շատ յաճախ պատահական նմանութեամբ կապում են Ջուդայի հետ: Արդէն ժԵ-ժԶ դարերի դիւանական փաստաթղթերը, որոնք բարեխոսեցին հաւաքուած են Ղ. Ալիշանի կողմից Վենետիկի պետական դիւանից եւ այժմ պահուում են Ս. Ղազարում, վկայում են այս թաղում բնակուող բազմաթիւ հայերի մասին (տե՛ս Ղ. Ալիշան, Հայ-Վենետ, էջ 382-391, նաեւ «Կտակք», «Վաճառականք», «Նոտարականք», «Դոմիմիկեանք» ցարդ անտիպ փաստաթղթերի ժողովածուները իր դիւանում):



Վեներտիկի Ս. Մարիամ Խորոտիկ եկեղեցու բակը

Եղբորորդիներ Զաքարիա (բնակութիւնը՝ Լիւռունո), եւ Վենետիկում բնակուող Ստեփան եւ Նահապետ Շահումեանների սերտ կապերը անձամբ Մխիթար Սեբաստացու եւ Մխիթարեանների հետ արտացոլուած է նրանց եւ Մխիթար Սեբաստացու բազմաթիւ նամակներում: Վենետիկում եղբորորդիները բազմիցս առնչուեցին Մխիթարեանների հետ, հայ գրատպութեան ու գրավաճառութեան, ինչպէս նաեւ տնտեսական գործունէութեան այլ հարցերում⁸:

Ստեփանոս եւ Նահապետ Շահումեանների կողմից 1736 թուականին Ս. Ղազարում կառուցուեց Սուրբ Գրիգոր Լուսաւորչի խորանը: Ս. Ղազարի «ժամա-

նակագրութեան» մէջ (Հտ. Ա, մասն Բ, 1737, էջ 390-391), շարադրուած է. Մատթէոս Եւզոկացու կողմից, հաղորդուած է. «էին ի Վեհեշ, յազգէ մերմէ եղբարք երկու հարազատք վաճառականք ի Հաբանդ երկրէ Հայաստանեայց: Անուն միում Ստեփանոս եւ երկրորդին Նահապետ եւ երկրորին մեծատունք: Կամ եղեւ սոցա յեկեղեցւոջ մերում զխորան Սրբոյն Գրիգորի աստուածարեալ Լուսաւորչին մերոյ ի սրբատաշ մարմարիոն վայելուչ գորշախայտ քարանց կառուցանել եւ առաջի խորանին գտապանատեղի իւրեանց պատրաստել: Եւ հաճութեամբ Աբբայ Հօրն մերոյ, ըստ օրինակին զոր նա ետ ի պիտակի նկարագրել եւ հաւանեցաւ, ծախիւք քրիստոսասէր երկուցն եղբարց այնոցիկ կառուցաւ վայելուչ խորանն ի փառս Քրիստոսի, եւ ի պատիւ Սրբոյ Հօրն մերոյ Գրիգորի Լուսա-

8 Տե՛ս Նամականի Մխիթարայ աբբայի, հատոր Ա-Գ, Վեներտիկ-Ս. Ղազար, ա.թ., է. Ղ. Տալեան, Մայր դիւան Մխիթարեանց Վեներտիկոյ ի Ս. Ղազար. 1707-1773, Վեներտիկ-Ս. Ղազար, 1930:

ւորչին եւ գերեզմանատեղին նոյն եղբարցն առաջի խորանին կազմեցաւ»⁹:

1758 թուականին Նահապետ Շահումեանը սնանկանալով («Փայիղ եղեալ») 1759 թուականի մարտի 28-ին վախճանուեց եւ թաղուեց Սուրբ Ղազարի ինքնաշէն խորանում: Սնանկացումը, կարծես թէ, հարուածում է նաեւ Ստեփանոսին, քանի

որ դիւանական փաստաթղթերում նրա կողմից եւս այլեւս չեն արձանագրուած առեւտրական գործարքներ: Սրանից յետոյ, կարծես թէ, Շահումեան վաճառատունը խապառ դադարում է Վենետիկում գործելուց, եւ աստիճանաբար մարում են նրա հետքերը :

9 Խորանի կառուցման վիճագիր արձանագրութիւնը այժմ հանուած է գետնից եւ ագուցուած է եկեղեցու նախագաւթի աջակողմում: Այն, երկար տարիներ գետնին մնալով, այժմ հագիւ է ընթեռնելի: Ստորեւ տալիս ենք Մխիթարեանների նախկինում տպուած ընթերցումը՝ «Ղափանեցիք Ծափումեանց տան //Պարոն Զաքարոն որ է Դաւթեան, //Պարոն Ստեփանն Վարդանեսեան. //Պարոն Նահապետն Պողոսեան, //Ստուն շինել զայս սուրբ սեղան //Եւ ընդ նմին զայս դամբարան, //Ի յիշատակ եւ ի կայան //Բնաւից որք են ճիւղք նոյնոյ տան. //Յամի Տեառն 1737. յուլիսի 30» (տե՛ս է. Ղ. Ալիշան, Միսական. Տեղագրութիւն Միւնեաց աշխարհի, էջ 301. է. Յ. Թորոսեան, Վարք Մխիթարայ Աբբայի, էջ 284-285. նաեւ՝ Դաւիթ Բէկ կամ Պատմութիւն Ղափանցոց», էջ 86-89, 113-114 եւ այլն):